

Նպատակ 9: Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը

Ներդրումները ենթակառուցվածքներում՝ տրանսպորտ, ոռոգում, էներգիա և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաներ, վճռորոշ են բազմաթիվ երկրներում կայուն զարգացման և համայնքների զորացմանը հասնելու համար: Վաղուց է ընդունված, որ արտադրողականության և եկամուտների աճի, առողջապահության ու կրթական ոլորտների արդյունքների բարելավման համար անհրաժեշտ են ներդրումներ ենթակառուցվածքներում:

Ներառական և կայուն արդյունաբերական զարգացումը եկամտի ստեղծման հիմնական աղբյուրն է, որը բոլոր մարդկանց կենսամակարդակի արագ և կայուն բարձրացման հնարավորություն է տալիս և տեխնոլոգիական լուծումներ ապահովում շրջակա միջավայրի նկատմամբ բարենպաստ արդյունաբերական զարգացման համար:

Տեխնոլոգիական առաջընթացը հիմքն է բնապահպանական այնպիսի նպատակների նվաճմանն ուղղված ջանքերի, ինչպիսիք են ռեսուրսների աճն ու էներգաարդյունավետությունը: Առանց տեխնոլոգիաների և նորարարության չի կարող տեղի ունենալ արդյունաբերության զարգացում, և առանց արդյունաբերության զարգացման չի կարող լինել զարգացում:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Արդյունաբերության զարգացման արդյունքում աշխատատեղերի քազմապատկումը դրական ազդեցություն ունի հասարակության վրա: Արտադրության ոլորտում ամեն աշխատատեղ ստեղծում է 2,2 աշխատատեղ այլ ոլորտներում:

Ո՞րն է նպատակը

Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել արդյունաբերության կայուն զարգացմանը և խթանել նորարարությունը:

Ինչո՞ւ

Տնտեսական աճը, սոցիալական զարգացումը և գործողությունը հանուն կլիմայի մեծապես կախված են ենթակառուցվածքներում ներդրումներից, կայուն արդյունաբերական զարգացումից և տեխնոլոգիական առաջընթացից:

Արագ փոփոխվող համաշխարհային տնտեսական լանդշաֆտի և աճող անհավասարության պայմաններում կայուն աճը պետք է ներառի արդյունաբերության այնպիսի զարգացում, որը, նախ և առաջ, հնարավորությունները հասանելի է դարձնում բոլոր մարդկանց համար, և երկրորդ՝ խթանվում է նորարարությամբ և դիմակայուն ենթակառուցվածքների առկայությամբ:

Այսպիսով՝ ո՞րն է խնդիրը

Հիմնական ենթակառուցվածքները, ինչպիսիք են ճանապարհները, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները, սանիտարական պայմանները, էլեկտրականությունը և ջուրը, շարունակում են սուղ լինել զարգացող շատ երկրներում: Մոտ 1-1,15 մլրդ մարդու համար հասանելի չեն հուսալի հեռախոսային ծառայությունները: Ամբողջ աշխարհում 2,5 մլրդ մարդու համար հասանելի չեն հիմնական սանիտարական պայմանները, և մոտ 800 մլն մարդու համար՝ ջուրը: Չարգացող երկրներում գյուղատնտեսական արտադրանքի հազիվ 30%-ն է ենթարկվում արդյունաբերական մշակման:

Ինչո՞ւ պետք է մտահոգի ինձ

Դա վերաբերում է մեր կենսամիջոցներին: Արդյունաբերական նոր ձեռնարկությունների աճ՝ նշանակում է մեզնից շատերի կենսամակարդակի բարելավում: Բացի դրանից, եթե արդյունաբերականացումն իրականացվում է կայունության սկզբունքով, ապա այս մոտեցումը դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա: Կլիմայի փոփոխությունը ներգործում է բոլորիս վրա:

Ի՞նչ կարծենա անգործությունը

Գինը չափազանց բարձր է: Աղքատության վերացումն ավելի դժվար կլինի՝ հաշվի առնելով արդյունաբերության դերը՝ որպես աղքատության վերացման և կայուն զարգացման առաջխաղացմանն ուղղված համաշխարհային զարգացման օրակարգի կարևորագույն շարժիչ ուժ:

Բացի դրանից, ենթակառուցվածքների բարելավման և տեխնոլոգիական նորարարությունների խթանման ձախողումը կարող է հանգեցնել վատ առողջապահության, անբավարար սանիտարական պայմանների և կրթության սահմանափակ հասանելիության:

Ինչպե՞ս կարող ենք օգնել

Սահմանել չափանիշներ և խթանել այնպիսի կարգավորումները, որոնք ապահովում են ընկերության նախագծերի և նախաձեռնությունների կայուն կառավարումը:

Չամագործակցել հասարակական կազմակերպությունների և պետական հատվածի հետ՝ օգնելու զարգացող երկրներում կայուն աճի խթանմանը:

Մտածել այն մասին, թե ինչպես է արդյունաբերությունն ազդում մեր կյանքի և բարեկեցության վրա, և օգտագործել սոցիալական մեդիան՝ քաղաքականություն մշակողներին մղելու Կայուն զարգացման նպատակները դարձնել առաջնային:

Կայուն զարգացման նպատակների և 9-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>